
ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ

(1918 -1922 թթ.)

ԽԱՌԱՏՅԱՆ Ա. Ա.

Արևմտահայության ցեղասպանության տարիներին, հատկապես 1915-1917 թվականներին Կ. Պոլսում հայ մամուլը կամ հոգեվարք էր ապրում, կամ առհասարակ դադարել էր հրատարակվելուց: Հայ հանրությունը, փաստորեն, հայտարարված էր օրենքից դուրս, ինչը կործանարար հետևանքներ պետք է թողներ նրա մշակութային հաստատությունների, այդ թվում և մամուլի վրա:

Նոր պարբերականներ հայտնվեցին 1918 թ. աշնանը, Մուղրոսի զինադադարից հետո, երբ արձանագրվեց Առաջին աշխարհամարտում Օսմանյան Թուրքիայի պարտությունը: Առաջիններից մեկը, որքան հայտնի է, իր օրաթերթը վերահրատարակեց Հայ Հեղափոխական Դաշնակցությունը («Արդարամարտ», ապա «Արիամարտ» և «Ճակատամարտ»), որին հետևեցին մի քանի նոր թերթեր («Ժողովուրդ», «Խելոք Դավիթ» և այլն): Եթե 1918 թ. Կ. Պոլսում լույս են տեսել յոթ նոր պարբերականներ, ապա 1919 թ. այստեղ, ինչպես և Զմյուռնիայում դրանց թիվն արդեն անցնում էր երկու տասնյակից:

1918 թ. Կ. Պոլսում հրատարակված թերթերը, սակավ բացառություններով, կարճ կյանք են ունեցել և փակվել են մի քանի թվահամարից հետո: Պատերազմից հետո ստեղծված քաղաքական ու տնտեսական անորոշությունը, անկայունությունն ու սպասողական լարված իրավիճակը մամուլի հարատևման պայմաններ չէին կարող ապահովել: 1918-1919 թթ. հրատարակվեց «Խելոք Դավիթ» երգիծական պատկերա- գարդ շաբաթաթերթը: Արտոնատերն ու պատասխանատու տնօրենն էր Հ. Ազնավուրը, աշխատակցում էին Հ. Ամիրենցը, Գր. Հ. Գալուստյանը, Լ. Շաթրյանը, Ալիասլանը (Ալ. Փանոսյան) և ուրիշներ: «Անթել հեռագիրներ», «Խելոք Դավիթին», «Խորոտ խապրիկներ» և այլ խորագրերով նյութերում շաբաթաթերթը դիպուկ ծաղրել է երիտթուրքական կազմալուծված իշխանություններին և նրանց վարած ոճրապարտ քաղաքականությունը հատկապես հայերի նկատմամբ: Երգիծաթերթը հաճախ է անդրադարձել երիտթուրքերին դատելու խնդրին, այս առթիվ փաստերով ցույց տվել, որ թուրքական նոր կառավարությունն ամեն կերպ ջանում է օգնել իթթիհատականներին՝ թաքնվելու առաջիկա դատավարությունից, որ դաշնակիցների ճնշումներով իրականացվելու էր Կ. Պոլսում¹: Ուշագրավ են այս թեմայով Ս. Դավիթյանի թուրքերեն երգիծական բանաստեղծությունները՝ ուղղված ֆրանսիացի թրքամուլ Պ. Լոթիին, որը ճգնում էր սատարել երիտթուրքական գործիչներին՝ մեղմացնելով կամ արդարացնելով նրանց վայրագությունները:

¹ Խելոք Դավիթ, 1919, N 13:

«Խելոք Դավիթը» տպագրել է ցեղասպանությունը վերապրածների հուշերը՝ մշտապես աչքի առաջ պահելով համազգային դեռևս թարմ աղետի մղձավանջները: Այլ հրապարակումներում բացահայտվում են երիտթուրքական կառավարման մեթոդների խայտառակ դրսևորումները, ջարդարարական գրաքննության գործելակերպը հայ մամուլի հանդեպ: Տպագրել է արտահայտիչ ծաղրանկարներ, երգիծական պատումներ, անեկդոտներ ու զրույցներ: Ընդամին, յուրաքանչյուր թվահամարում պարբերականը զետեղել է մեկ կամ երկու գլխավոր ծաղրանկարներ (Թալեաթի, Էնվերի և սրանց գործակիցների, Փարիզի Հաշտության համաժողովում թուրքերի երեսպաշտական կեցվածքի և այլնի վերաբերյալ), որոնք զուգակցվում են նաև հպանցիկ և ուրվագծային ծաղրանկարներով: Շաբաթաթերթը պատերազմում հաղթանակած պետություններից ակնկալում էր արդար դատաստան երիտթուրքերի նկատմամբ, ինչպես և Հայաստանի քաղաքական կացության կարգավորումը: Համակրական վերաբերմունք ուներ Հայաստանի Հանրապետության հանդեպ²:

Պոլսահայ հետպատերազմյան շրջանի երգիծանքը շատ ավելի բարձր արվեստի և խորության հասավ Ե. Օտյանի խմբագրած «Բզնատ աղա» երգիծական շաբաթաթերթում (1919-1920): Ժամանակի հայ իրականության, պոլսահայ կյանքի և Օսմանյան Թուրքիայի քաղաքական իրավիճակի երգիծական գնահատականը Ե. Օտյանը տվել է այս ժանրի լավագույն ավանդույթների ոգով և խոշոր արվեստագետին հասուն դիտողականությամբ: Շաբաթաթերթի նյութերն ընդհանուր երգիծական շառավղի և միևնույն հունի մեջ է ուղղորդում Բզնատ աղան՝ Օտյանի ստեղծած պերսոնաժը: Նա հեղինակի ամենատես և սրամիտ զրուցակիցն է, իրադարձությունների ու անձանց հանդեպ նրա մտքերի ու վերաբերմունքի արտահայտիչը: Կերպարի այս երկակի բնույթը Օտյանին հնարավորություն է տվել երևույթները գնահատել բազմակողմանիորեն, ի հայտ բերել հակադիր կարծիքներ ու տեսակետներ: Իր հերոսի հետ միասին Օտյանն ուշադրություն է դարձնում պատերազմում պարտված Թուրքիայի նոր կառավարության ազգայնամոլության, իթթիհատի դեմ կեղծ պայքարի դրսևորումներին, արևմտահայության սպանդի իրողությունը թաքցնելու կամ խեղաթյուրելու նրա ջանքերին: Օտյանը խորաթափանցորեն նկատում էր թուրքական կառավարության և միլլի (ազգայնական) շարժման փոխադարձ համակրանքները, ապա և դրա հետևում թաքնված համագործակցությունը³: Նա հատկապես ծանակել է քեմալական շարժման ծայրահեղ ազգայնամոլությունը, կայսրության փլատակների տակ փոքր ազգերին ճզմելու և ոչնչացնելու գնով նոր Թուրքիա ստեղծելու նրա ջանքերը: Օտյանը բացահայտում է առհասարակ իթթիհատական և այլ ազգայնական տարրերի համախմբումը ոչ միայն Քեմալի շուրջ, այլև խորհրդարանում՝ հակառակ Թուրքիայի պարտության: Երգիծաբանը ծաղրում է թուրքական խորհրդարանի ընտրությունները, այդ գործընթացում տեղ գտած բազմաթիվ խաբեություններն

² Նույն տեղում, 1919, N 14:

³ Իզնատ աղա, 1919, N 3, էջ 21, N 5, էջ 76-77:

ու խայտառակությունները, որոնց հետևանքով այն լցվել էր երբեմնի մարդասպաններով⁴:

Թուրքիայի տազնապ ներշնչող իրադարձությունները Օսյանին մղում էին վերհանելու Անտանտի տերությունների՝ Հայկական հարցի հանդեպ շահադիտական վերաբերմունքի դրսևորումները: Շաբաթաթերթում երգիծվում է ամերիկյան գնդապետ Հաուզը, որը Հայկական հարցում իր աջակցությունն էր հայտնել Նուպարին, բայց գործնականում ոչինչ չէր արել⁵: Ավելին, Օսյանն իրատեսական կասկածով էր համակված հայկական հնարավորությունների նկատմամբ՝ դատելով թուրքերի հանդեպ եվրոպական երկրների հակասական դիրքորոշումներից, Փարիզի հաշտության համաժողովում Հայկական հարցը հետին բնագծեր մղելու և նման այլ իրողություններից:

Օսյանը հարում էր այն մտավորականներին, որոնք կասկածով էին համակված Հայաստանի Հանրապետության՝ համազգային հայրենիք դառնալու հնարավորությունների հանդեպ: Երևանի հանրապետության նկատմամբ Օսյանի այս դիրքորոշումը բացասական ուղղվածություն էր ստանում դաշնակցության դեմ նրա վաղեմի քննադատական կեցվածքով, իսկ այդ կուսակցությունը ազդեցիկ ուժ էր ներկայացնում հանրապետության կառավարության մեջ: Ի դեպ, Օսյանն ընդհանրապես քննադատական կտրուկ վերաբերմունք ունի ազգային մյուս կուսակցությունների՝ հնչակների ու ռամկավարների հանդեպ: «Հայաստանէն լուրեր», «Հայկական պատուանշան», «Մեր տեսակցութիւնները» և այլ ֆելիետոններում նա երգիծել է այդ կուսակցությունների միջև եղած հակասություններն ու փոխադարձ հակակրանքները: Օսյանը ծաղրի նշավակ է դարձրել նաև ժամանակի պոլսահայ միջավայրի, ինչպես և մարդկանց փոխհարաբերությունների ստվերոտ կողմերը՝ հատկապես «Նոր ազգային ջոջեր» խորագրով դիմանկարներում: Այստեղ միմյանց հերթ չեն տալիս անսկզբունք երեսփոխանները, շաղակրատները, դրամաշորթ լրագրողները և այլն: Շաբաթաթերթում նա տպագրեց «Փառքի ետևէ» համեմատաբար ծավալուն գործը: 1920 թ. փետրվարին «Իգնատ աղա» երգիծաթերթը միացել է Ե. Օսյանի խմբագրած մյուս՝ «Շավիղ» երգիծաթերթին և լույս տեսել «Շավիղ Իգնատ աղա» անվամբ:

Նույն 1919-1920 թթ. Կ. Պոլսում հրատարակվում էր Ազգային ազատական կուսակցության պաշտոնաթերթ «Արագած» շաբաթաթերթը՝ Վ. Շահրիմանի խմբագրությամբ: Աշխատակցում էին Գր. Հ. Գալուստյանը, Հ. Պոնճուքյանը, Հ. Տեր-Սահակյանը, Բ. Ոսկին և ուրիշներ: «Մեր ազգայնականությունը» հոդվածում Վ. Շահրիմանը հայտնում էր, որ շաբաթաթերթի նպատակը «ազգային ինքնապահպանությունն ու վերաշինումն է», որին հասնելու համար պահանջվում է ազգային միասնություն⁶: Նույն ոգով «Արագածի» խմբագիրը քարոզում էր կուսակցությունների համերաշխություն և ողջունում Վերակազմյալ հնչակյանների ու ռամկավարների գործակցությունը Ադանայում՝ 1919 թ.⁷: Փարիզի հաշ-

⁴ Նույն տեղում, N 9, էջ 72-73, N 4, էջ 28:

⁵ Նույն տեղում, N 7, էջ 55:

⁶ Արագած, 1919, N 5, էջ 6-7:

⁷ Նույն տեղում, N 14, էջ 20:

տության համաժողովից առաջ և հետո Շահիրիմանը եվրոպական տերություններից և ԱՄՆ-ից էր ակնկալում հայության անվտանգության երաշխիքները: Միաժամանակ, նա կարծում էր, որ իրենցից՝ հայերից է կախված «վտանգավոր դրացնություններու» միջավայրում գոյատևելու հնարավորությունը⁸: Նա պաշտպանում էր հայերի «ճշմարիտ անկախութեան», իրենց հայրենիքում անկախ պետականություն ստեղծելու գաղափարը: Շահիրիմանը դատապարտում էր «կրքի, քինախնդրութեան և ամուլ վեճերու մեջ» խրված մտավորականությանը, թաքնված բանավեճ մղում «Իզնատ աղայի» և այլ հրատարակությունների դեմ, որոնք պայքար էին սկսել ազգային կուսակցությունների հետ, մինչդեռ վերջիններիս դրոշի ներքո, նրա համոզմամբ, մարտնչում են «-հազարավոր հայ հայրենասերներ»⁹:

Ուշագրավ մեկնաբանություններ էր տալիս Շահիրիմանը դաշնակցություն-երիտթուրքեր փոխհարաբերություններին: Նրա կարծիքով, «անքաղաքագետ և անխոհեմ» կլինեին, եթե հայերը մերժեին երիտթուրքական սահմանադրությունը, բայց և այդ կուսակցությունը չպետք է հավատար Երիտթուրքերի անկեղծությանը: Ազգի լայնախոհ ընթացքին, նրա կարծիքով, խանգարեցին քաղաքական մշակույթի պակասը, կուսակցական նեղմտությունն ու «հատուածական փոքրագոյութիւնները»¹⁰: Շահիրիմանը շատ ավելի որոշակի է տեսնում 1914 թ. իթթիհատին զսպելու գործում թույլ տրված ճակատագրական սխալները, երբ կարելի էր, ըստ հնարավորին, ինչ-որ չափով կանխել մոտալուտ արհավիրքները:

Հետաքրքիր է շաբաթաթերթի վերաբերմունքը Հայաստանի Հանրապետության նկատմամբ: Մի տևական ժամանակ «Արագածը» լրություն էր պահպանում շրջանցելով այս թեման: Պատճառը, կարելի էր կարծել, նախ, Նուպարի և արևմտահայության մի սովոր մասի սպասելիքներն էին Փարիզի համաժողովից՝ Արևմտահայաստանում անկախ պետություն ստեղծելու հույսով: Արևելյան Հայաստանի տարածքում Հայաստանի Հանրապետության գոյությունը, մինչդեռ, այդ սպասելիքներն ունեցողների կարծիքով, թուլացնում էր բնաշխարհի ընդարձակ տարածքներում ենթադրվող հայկական պետություն ստեղծելու հնարավորություններն ու կռվանները¹¹: Այնուհետև, «Արագածը» սկզբունքային առարկություններ ուներ ընկերվարների գաղափարախոսությանը՝ հակադրվելով հատկապես հայ ընկերվարներին, այդ թվում և դաշնակցությանը: Սպանդի և անտանելի տառապանքների է ենթարկվել ամբողջ հայ ժողովուրդը, պնդում է շաբաթաթերթը, ուստի պետք է հոգալ նրա մասին՝ առանց սոցիալական կամ դասակարգային որևէ նախապատվության: Համապատասխանաբար, իշխանությունը նույնպես պետք է պահպանի ամբողջ ժողովրդին և ոչ թե նրա այս կամ այն խավին կամ դասակարգին¹²:

Ապագա Հայաստանի վերաբերյալ «Արագածի» հույսերն ամրապնդվում էին անգլիացի հայասեր Զ. Բրայսի՝ Փարիզի համաժողովի նախա-

⁸ Նույն տնդում, N 8, էջ 114-115:

⁹ Նույն տնդում, N 15, էջ 201-202:

¹⁰ Նույն տնդում, N 16, էջ 214:

¹¹ Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, հ. 1, Ե., 2006, էջ 503, 517:

¹² Արագած, 1919, N 25, էջ 322:

շեմին հուսադրող ելույթներով: Շահրիմանը թարգմանաբար տպագրեց նրա «Հայաստանի ապագան» հոդվածը, որտեղ Բրայսը պնդում էր, որ թուրքական տիրապետությունը պետք է վերացվի այլակրոն ժողովուրդների վրայից և սահմանափակվի «Տավրոս լեռներեն անդին գտնուող արեւելեան երկրամասերու մէջ»¹³: Իրականում Բրայսն առավել մտահոգված էր հայության ցեղասպանության ողջ մեղքը ոչ միայն թուրքերի, այլև Անտանտի երեկվա թշնամի Գերմանիայի վրա բարդելու խնդրով: Նա նույնպես պաշտպանում էր իր երկրի կառավարության ուղեգիծը՝ Հայաստանի խնամատարությունը ԱՄՆ-ին հանձնելու հարցում:

Արևմտահայաստանի տարածքում անկախ ազգային պետություն ստեղծելու գաղափարը «Արագածը» հիմնավորում էր ազատագրական պայքարի՝ որպես ժողովրդի կամքի դրսևորման փաստով և այս դիտանկյունից ևս արժեքավորում ազգային հերոսներին: Շաբաթաթերթը բացառիկ բարձր գնահատական էր տալիս Անդրանիկին, որի գործունեության հերոսական դրվագներն են ցուցադրված Գ. Պետյանի «Հայ կառավարական բանակը Կովկասի եւ Պարսկաստանի ճակատներուն վրայ» հուշերում, և որը շարունակաբար տպագրեց «Արագածը» 1919 թ.: Շահրիմանը դրվատում էր Անդրանիկի «Հայաստան» օրաթերթը՝ այն համարելով ազգային նպատակների ու գործողությունների քարոզիչ և վկայակոչելով Անդրանիկին, որն այդ թերթն համարում էր «բացառաբար նուիրուած... արեւմտահայ գաղթականական կարիքներուն»¹⁴:

Իր սրտնեղությունը թաքցնելով Երևանի կառավարության կողմից Միացյալ Հայաստանի հռչակման առթիվ՝ «Արագածը» կարծում էր, որ ավելի նպատակահարմար կլիներ կազմել Միացյալ Հայաստանի ժամանակավոր կառավարություն՝ ընտրված Երևանի և Փարիզի հայկական պատվիրակության (Նուպարի) կողմից: Այն պետք է գործեր մինչև Հայաստանի սահմանները որոշելը և տարագրյալների վերադարձը, որին կհետևեր ազգի բնականոն կյանքի ընթացքի վերականգնումը: Սրանով հանդերձ, Շահրիմանը նաև բացասական դիրքորոշում ցուցաբերեց Միացյալ Հայաստանի հռչակման նկատմամբ. «Երեւանի խորհրդարանի այս անակնկալ քայլը կարելի է հարուած մը նկատել ուղղուած Բարիզի Հայկական պատուիրակութեան, որ ցարդ կը գործեր յանուն ամբողջ հայութեան եւ յանուն Միացեալ Հայաստանի»¹⁵:

«Արագածն» անդրադառնում էր ամերիկյան մանդատի հետ կապված քաղաքական խնդիրներին, հերքում այն անհնարին համարող տեսակետները: Շաբաթաթերթը հերքում էր նաև Կ. Պոլիս ժամանած ԱՄՆ պատվիրակությանը քրդական կոմիտեի ներկայացրած այն պնդումները, թե իսլամները բացարձակ մեծամասնություն են կազմում Թուրքիայի արևելյան նահանգներում, և թե, իբր, անկարելի է այնտեղ հայկական պետություն ստեղծելը: «Արագածն» առաջարկում էր հայերի թվաքանակը հաշվել 1913 թ. տվյալներով, ընդգծում էր հայերի քաղաքակրթիչ դերը, հայրենիք ունենալու իրավունքը և այլն¹⁶: Միաժամանակ, զգացվում էր

¹³ Նույն տեղում, N 21, էջ 280:

¹⁴ Նույն տեղում, N 4, էջ 50:

¹⁵ Նույն տեղում, N 23, էջ 308:

¹⁶ Նույն տեղում, N 29, էջ 369:

թերթի տաճնապը Թուրքիայի վերաբերյալ քաղաքական լրատվության մեջ: Փաստեր են բերվում Քեմալի տենդագին պատրաստվածության, իր կողմնակիցներին զինելու մասին: Կասկածելի էր մանավանդ թուրքական կառավարության շինծու և ցուցադրական ճիգը՝ Քեմալի դեմ պայքարելու պատրանք ստեղծելու հարցում: Ամբողջ Ամասիայի շրջանը լեփ-լեցուն է Քեմալի չեթեական կազմակերպություններով, այդ ցանցը տարածված է արևելյան նահանգներում, մինչև Կարին՝ առանց որևէ պաշտոնական արգելքի: Իթթիհատական ջարդարարները վերստին պաշտոնի են կոչվում, ինչպես Ֆերիդին օղլու Օսմանը, որը կարգվել է Կիրասունի քաղաքապետ¹⁷: «Արագածը» վերլուծում էր քաղաքական խառնակ իրավիճակը և տալիս իրատեսական գնահատականներ:

Շաբաթաթերթը ուշագրավ տեղեկություններ է տպագրել 1919 թ. Կիլիկիայում ստեղծված իրադրության, Ադանայում կուտակված հայ գաղթականության, տեղի Ազգային միության գործունեության մասին: Տեղեկություններ են տրվում դատարանին հանձնված կամ դատի տրված իթթիհատականների եղեռնագործ անցյալի մասին: Մերկացնող նշանակություն ունի նրա այն տեղեկությունը, որ Յոզղատի ջարդարարներից ոմն Քեմալ խելագար է ձևացել՝ կախաղանից խուսափելու նպատակով: Իսկ Չանղըրի իթթիհատի պատասխանատու քարտուղար Ջեմալ Ուղուզը, որ գլխավոր դերակատարն էր «Վարուժանի, տոքթ. Սեւակի եւ անոնց ընկերներուն չարչարալից սպանումին», ձերբակալված է և դատվելու է մոտ ժամանակներում: Այդ հրեշը, որ մինչ իր պաշտոն ստանձնելը գրեթե չքավոր էր, սպանված հայերի կարողությունները զավթելով, դիզել էր անհավատալիորեն վիթխարի դրամագլուխ և ձեռնարկել առևտրական գործերի¹⁸:

Կարևոր էր «Արագածի» բանավեճը թուրքական այն թերթերի դեմ, որոնք հայերին մեղադրում էին «թուրքասպան խժոժութիւններու» մեջ: Այդ առասպելն հատկապես ծավալվում էր թուրքական «Իկդամ» («Համառություն») և «Թասվիր-ի Էֆքյար» («Մտքերի արտացոլում») թերթերում: «Արագածի» որակումով՝ այդ լայիրջ և աներես կեղծիքը, որ մեր օրերում ևս հաճախ պոռթկում է հայերի ցեղասպանության միջազգային ճանաչմանը զուգահեռ, հետևաբար, նոր բան չէ և ձևավորվել է իթթիհատական Թուրքիայի փլատակների տակ ծվարած թուրքական անցումային կառավարության շրջանում՝ զուտ ապակողմնորոշման նկատառումներով:

Փաստական տվյալներով են հագեցած «Արագածի» այն նյութերը, որոնք վերաբերում են Կ. Պոլսի հայ իրականությանը, վերադարձած տարագրյալների խնամքի ու ապաստանի հարցերով զբաղված պատրիարքարանի և խնամատարության խորհրդի գործունեությանը, սրանց տարաձայնություններին և այլն: Շաբաթաթերթը մասնավոր ուշադրություն է դարձրել լքված գույքերի խնդրին: Համաձայն օսմանյան գործող օրենքի, լքված կամ անժառանգ մնացած ինչքի սեփականության իրավունքն անցնում էր պետությանը, որին և հիմնավորապես առարկում էր «Արագածի» հեղինակ, փաստաբան Թ. Տեր-Սահակյանը: Ժառանգորդ լինելու համար, գրում էր նա, պետությունը նախ պետք է ապահովի իր հպատակների

¹⁷ Նույն տեղում, 1919, N 28, էջ 367:

¹⁸ Նույն տեղում, N 16, էջ 224:

անվտանգությունը, մինչդեռ այդ պետությունը բնաջնջել է հայերին: Այս իրավիճակում անժառանգ հայկական գույքերի օրինական տերը կարող է լինել միայն հայ ազգը, հիմնավորում է հեղինակը¹⁹:

Ազգային կորուստների մեջ «Արագածն» առանձնացնում էր մշակույթին հասցված ահռելի հարվածը՝ հայ մտավորականության գլխատումը իթթիհատի ձեռքով: Այս թեմայով տպագրվեց Ս. Եղբայրյանի հոդվածաշարը՝ նվիրված Դ. Վարուժանի, Ռ. Սևակի, Գր. Ջոհրապի, Սիամանթոյի, Տ. Քելեկյանի և այլոց կյանքին ու ստեղծագործությանը:

□Արագածի□ գեղարվեստական գրականության մեջ առաջատարը չափաձոն է: Այստեղ ակնհայտորեն զգացնել է տալիս թեմայի միօրինակությունը, և դա հասկանալի է՝ կրած մեծագույն կորստի բանաստեղծական հանրագումարը շարունակում էր իր ընդհանրացումները երբեմն-երբեմն հազենալով վերապրումի լավատեսական տրամադրություններով: Արձակը ևս ներծծված է պահի ազգային-քաղաքական տրամադրություններով, սակայն այստեղ գերիշխում են ապրելու կամքի, պայքարի և ազգի վերածնության խոհերը: Արձակ էջերը հիմնականում պատկանում են պատմվածքի կամ նովելի ժանրին:

«Արագածի» ազգային բովանդակությունը ընդարձակվում է Կ. Պոլսի հայ համայնքի XVII-XVIII դդ. պատմությանը նվիրված էջերով, Վ. Թորգոմյանի հեղինակությամբ: Այս հեղինակի լրջմիտ ուսումնասիրությունները վերաբերում են Կ. Պոլսի հայոց պատրիարքությանը, նրա գործունեության ուշագրավ շրջաններին, Ազգային հիվանդանոցի հիմնադրմանը, Օսմանյան Թուրքիայում հայ մեծահարուստների հեղհեղուկ կացությանը և այլն, որոնք ունեն պատմաբանասիրական որոշակի արժեք: Ժամանակի Կ. Պոլսում հրատարակվող հայ պարբերականների մեջ «Արագածն» առհասարակ աչքի է ընկնում հարուստ բովանդակությամբ, առաջադեմ հայացքներով ու ընթերցողների մեջ ունեցած արժանի ազդեցությամբ: Նրա նյութերում խտացած դրամատիկ լարվածությունն արտացոլում է պոլսահայ, այլև համազգային իրական տրամադրությունները, որով էլ պայմանավորված է նրա ճանաչողական արժեքը:

Կ. Պոլսում կազմակերպված՝ հայ երիտասարդ իրավաբանների ակումբը 1919-1920-ական թթ. հրատարակում էր «*Իրավունք*» շաբաթաթերթը՝ Ա. Չարքյանի պատասխանատու տնօրինությամբ: Այս շաբաթաթերթը պետք է իրականացներ ակումբի առջև դրված խնդիրները՝ մշակեր տեսական իրավագիտական հիմնահարցեր, նպաստեր դրանց ժողովրդականացմանը, ինչպես նաև տեղայնացներ վերոհիշյալ հիմնահարցերը: Այն կազմակերպելու էր իրավունքին նվիրված դասախոսություններ, բանավեճեր, օգներ՝ ստեղծելու իրավաբանական եզրույթների հայերեն համարժեքներ, իրավագիտական մասնագիտական գրադարան և այլն: Շաբաթաթերթն արժարժում էր ընտրական իրավունքին, կրոնի և պետության փոխհարաբերություններին, փաստաբանական գործունեության, օրենքների մեկնաբանությունների վերաբերյալ խնդիրներ: Աշխատակցում էին ակումբի անդամներ Ա. Չարքյանը, Ս. Ռշտունին, Վ. Զեյթունյանը, Գր. Հ. Գալուստյանը, Ստ. Գարայանը և ուրիշներ:

¹⁹ Նույն տնդում, N 5, էջ 69-70:

1919-1922 թթ. Կ. Պոլսում աշխուժացում ապրեցին պատանեկան և մարզական հրատարակությունները: Առաջինը «Հայ սկսաուտ» հանդեսն էր (1919-1920)՝ Հայ մարզական ընդհանուր միության հրատարակությունը: Խմբագիրն էր Կ. Պ. Ուշագյանը, պատասխանատու տնօրենը՝ Հր. Տեր-Ներսեսյանը: Այն Կ. Պոլսի սկսաուտական հայկական կազմակերպությունների պաշտոնաթերթն էր, որը մարզական ծրագրեր էր իրականացնելու թաղային և անհատական վարժարաններում²⁰: Այդ ծրագիրը «Հայ սկսաուտը» ներկայացնում էր իր համապատասխան՝ մարմնամշակության (առողջապահություն), մարմնակրթության (մարմնամարզություն, խաղեր), սկսաուտության (երևելի մարզիկների կենսագրականներ, նրանց նըվիրված գեղարվեստական երկեր), ՀՄՀՄ գործունեության, մրցումի նյութերի և այլ բաժիններում: Պարբերականն ի սկզբանե հանդես էր գալիս վերկուսակցական, համազգային դիրքերից: Նրա կարծիքով, հայերը մեծ պատասխանատվությամբ պետք է մոտենան սկսաուտական մարզական շարժմանը, որ տարածված է ամբողջ աշխարհում: Ակնկալելով հայ բեկորների մոտալուտ ներգաղթը և հայկական պետության ստեղծումն Արևմտահայաստանում՝ «Հայ սկսաուտը» Հայաստանի Հանրապետությանը կոչ էր անում մասնավոր հոգածություն հանդես բերել ազգի մարզական մշակույթի զարգացման նկատմամբ: Պարբերականը բավական տեղեկություններ է տվել սկսաուտական ու մարզական շարժման մասին: Գրիգոր Մերջանովը, որը հայ մարզական առաջին պարբերականի՝ «Մարմնամարզի» (Կ. Պոլիս, 1911-1914) ակտիվ գործիչներից էր, «Հայ սկսաուտի» էջերում իր տպավորություններն է պատմում Հայաստանի Հանրապետության մարզական կյանքի մասին: Շուրջ 20 հազար որբեր, հայտնում է հանդեսը, Հայաստանում զբաղվում են մարզանքի դասերով: Հանրապետության լուսավորության նախարարությունը, ըստ նրա, գնահատելի ջանքեր է գործադրում կառավարությունից մարզական հատկացումներ ստանալու համար²¹:

«Հայ սկսաուտի» էջերում զետեղվել են մարզական իրադարձությունների վերաբերյալ լուրեր, ռեպորտաժներ, թղթակցություններ, տարբեր բնույթի հրապարակումներ: Հատկապես հարուստ են ֆուտբոլին վերաբերող նյութերը: «Հայ սկսաուտը» շարունակում էր «Մարմնամարզի» լրագրական ավանդույթները՝ տպագրելով մարզական տեսական բնույթի հոդվածներ, մարմնակրթության բնախոսությանը, ֆիզիկական ու մտավոր ներդաշնակ զարգացմանը նվիրված ինքնուրույն և թարգմանական նյութեր: Գործնական արժեք ունեին շաբաթաթերթի թղթակցություններն ու ռեպորտաժները գավառի (Մարզվան, Զմյուռնիա, Ադաբազար և այլուր) մարզական կյանքի, մրցումների մասին: Նույնին են հետամտում նրա տպագրած հրապարակումները եվրոպական և ամերիկյան մարզիկների, մարզաձևերի և այլնի վերաբերյալ: Պարբերականը տպագրել է ուշագրավ մեթոդական ցուցումներ, ընթերցողի ուշադրությունը հրավիրել սպորտի նպատակի, անհատի բարոյական ձևավորման գործում ֆիզիկական պատրաստականության նշանակության մասին: Հետաքրքիր

²⁰ Հայ սկսաուտ, 1919, N 1, էջ 3:

²¹ Նույն տոմար, N 2, էջ 17:

են հայ առաջին օլիմպիականների մարզական կյանքը լուսաբանող նյութերը: «Հայ սկաուտն» այս թեմայով տպագրեց Հաբեթ Փափազյանի (օլիմպիական մրցումներին մասնակցած առաջին հայ ատլետը, Աթենք, 1896 թ., 1-ին օլիմպիական խաղեր), նրա եղբայր Վահրամ Փափազյանի և Մկրտիչ Մկրյանի (Ստոկհոլմ, 1912 թ., 5-րդ օլիմպիական խաղեր) համառոտ մարզական բնութագրերն ու լուսանկարները²²:

«Հայ սկաուտն» անդրադարձել է դարասկզբի հայ մարզական կյանքին, տպագրել ցեղասպանությանը զոհ գնացած մարզիկներ Գալուստ Արխանյանի, Հայկ Ճոլոյանի, Գ. Քերեստեճյանի, Վ. Յափուճյանի և այլոց գործունեությունը լուսաբանող նյութեր: Հետաքրքրական են, մանավանդ, «Մարմնամարզի»՝ հայ անդրանիկ մարզական պարբերականի խմբագիր Շավարշ Քրիսյանի վերաբերյալ նյութերը: Կ. Ուշագլյանի «Շավարշ Քրիսյան» և իր «Մարմնամարզ» թերթը հոդվածում բացահայտվում է Քրիսյանի տեղը հայ մարզական մամուլի ստեղծման գործում, այն, որ նա մտավոր ընթացք է տվել և կազմակերպել ազգային մարզական պատրաստի ուժերին ու կարողություններին՝ ապահովելով նրանց տեղը մամուլի անդաստանում²³: Շ. Քրիսյանի եղբորորդի Ա. Քրիսյանը շարադրել է նրա կենսագրությունը, ընդգծել սպորտի ազգային և հայրենասիրական նշանակությունը նրա կյանքում: Նշվում է նաև, որ Շ. Քրիսյանն է կազմակերպել Հայկական 1-ին Օլիմպիական խաղերը, հիմնել սկաուտական (արիների) շարժումը²⁴: Այս, ինչպես և Պետուշի գրած հոդվածից պարզվում է, որ երիտթուրքերը չեն հանդուրժել Շ. Քրիսյանի հայրենասիրական կեցվածքը: Վերջինս 1915 թ. խառնակ օրերին չի հասցրել հեռանալ Կ. Պոլսից, հիվանդության պատճառով, ձերբակալվել է և ապա աքսորվել Այաշ և այս միջոցներին էլ զոհ գնացել եղեռնին²⁵:

«Հայ սկաուտը» ձգտել է նպաստել կանանց մեջ ֆիզկուլտուրան և սպորտը տարածելու շարժմանը, կարևորել դպրոցներում աղջիկների ֆիզիկական պատրաստականության հիմնահարցը: Այս դաստիարակությունը ևս պետք է ընդգրկվեր միասնական դպրոցական մարզական ծրագրի մեջ, որի իրականացման էր փափագում շաբաթաթերթը Երևանում, Կ. Պոլսում, Իզմիրում, ինչպես և Եգիպտոսի և այլ գաղթօջախներում: Այս նպատակը շաբաթաթերթն ի սպաս էր դնում հայրենիքի մոտալուտ և ակնկալվող վերածնությանը: Իր գրեթե բոլոր խմբագրականներում «Հայ սկաուտն» արծարծում էր ազգի և հայրենիքի զորացման մջ սպորտի նշանակությունը: Մարզական հաջողությունները շաբաթաթերթի համար այդ կարևորության վկայությունն էին: Մարզվանի «Անատոլիա» կոլեջում հայ մարզիկների հաղթանակի առթիվ շաբաթաթերթը գրում էր, որ «բոլորը տեսան ու համաձայնուեցան, թե հայ ցեղի մեջ կայ ոգի մը, որ երեսն կուգա անմիջապես, ուր նպաստաւոր պայմաններ գտնե»²⁶:

²² Նույն տեղում, 1920, N 10, էջ 165:

²³ Նույն տեղում, N 12, էջ 186-189:

²⁴ Նույն տեղում, էջ 189:

²⁵ Նույն տեղում, էջ 192-199:

²⁶ Նույն տեղում, N 7, էջ 113:

Մասնագիտական հրատարակության առումով, նյութերի հագեցվածությամբ ու բազմակողմանիությամբ «Հայ սկսուտը» շարունակում էր այն ավանդույթները, որոնց հիմքը դրել էր «Մարմնամարզ» շաբաթաթերթը:

Զմյուռնիայում համանման հրատարակություն էր տեղի սկսուտների «Պատրաստ» կիսամյա պարբերականը՝ 1921-1922 թթ.: Արտոնատերն ու պատասխանատու տնօրենն էր Բ. Գույումճյանը, խմբագիրը՝ Զ. Հաբեթյանը: Կիսամյա այս հանդեսը հետամտում էր պատրաստել հայրենիքին ու եկեղեցուն հավատարիմ ու օգտակար հայ քաղաքացիներ, նրանց մեջ զարգացնել հայրենասիրական զգացումներ: «Պատրաստը» տեղեկացնում էր, որ Զմյուռնիայում կազմակերպվել է «Հայ պոյսքառուտներու միութիւնը» (ՀՊՍՍ), որը մաս է կազմում Կ. Պոլսի և Իզմիրի «Հայ պոյսքառուտներու եղբայրութիւն և Միութիւն» (ՀՊՍԵՄ) կազմակերպությանը: Ավելի սերտ դարձնելով իր գործակցությունը Կ. Պոլսի հայկական կազմակերպությունների հետ՝ ՀՊՍՍ-ը կազմակերպորեն միավորվեց «Հայ մարմնակրթական ընդհանուր միութեան» (ՀՄԸՄ) հետ:

«Պատրաստին» աշխատակցում էին Թ. Մեծատուրյանը, Ա. Պերպերյանը, Պ. Պյոթրեքճյանը, Ե. Ությունճյանը և ուրիշներ: Այս կիսամյա պարբերականն ուներ «Սկսուտիզմը արտասահմանի» մեջ, «Մարգաշխարհ», «Սկսուտական ներքին շարժում», «Աղջիկ սկսուտներու և մարգուհիներու աշխարհէն» և այլ խորագրեր, որոնց ներքո տպագրվում էին Զմյուռնիայի հայ պատանիներին հետաքրքրող ամենատարբեր նյութեր, լուրեր արտերկրի մարգաշխարհից, սկսուտների առօրյայի, բանակումների մասին: Պարբերականը քարոզում էր ամբողջ աշխարհի սկսուտների գործակցության ու համերաշխության գաղափարը՝ «Պատանիների եղբայրակցությունը հետամտում է մարդկության եղբայրակցությունը» կարգախոսով: «Պատրաստը» տպագրել է եվրոպական և ամերիկյան երկրների սկսուտների ողջույնի ուղերձները հայ պատանիներին, Փարիզի միջազգային սկսուտական համաժողովին նվիրված նյութեր: Ուշագրավ են Զմյուռնիայի պատանիների մարզական կյանքին, տեղացի հույների և եվրոպացիների հետ նրանց ֆուտբոլային և այլ մարզաձևերից մրցումների մասին հրապարակումները: «Պատրաստը» հայ ընթերցողի մեջ փորձում էր զարգացնել հոգեբանական արժեքավոր որակներ՝ մեծահոգություն մրցակցի հանդեպ, արիություն և արժանապատվություն պարտության դեպքում և այլն²⁷, նյութն ամրապնդելով լուսանկարներով, մարզական կյանքի պատմության դրվագներով: Նրա էջերում հատկապես ուշադրության առարկա էր աղջիկ սկսուտների մարզական կյանքի լուսաբանումը Թուրքիայում, Եվրոպայում և ԱՄՆ-ում՝ անգամ այնպիսի մարզաձևերի ընդգրկումով, ինչպիսին էր, օրինակ, ոչ ավանդական կանացի բռնցքամարտը: Ուշագրավ են Զմյուռնիայի հույների «Բանիոնիս» և «Հայկական խումբ» ֆուտբոլային թիմերի հանդիպման վերաբերյալ հրապարակումները: «Պատրաստն» իր համեստ նպաստն է բերել հայ մարզական լրագրության զարգացմանը՝ տպագրելով մարզական թղթակցություններ, ռեպորտաժներ, հանրագումարային հաշվետվու-

²⁷ Պատրաստ, 1922, N 11, էջ 46:

յուններ և այլն: «Պատրաստի» վերջին թիվը լույս է տեսել 1922 թ. օգոստոսի 6-ին, Ջմյուռնիայի աղետից մոտ մեկ ամիս առաջ, երբ թուրքական մոտալուտ հարձակման վտանգը կաթվածահար էր արել մշակութային հիմնարկների գործունեությունը:

Սկստական շարժման հետևորդն էր Կ. Պոլսում 1920-1922 թթ. հրատարակված «Հայ պատանի» պատկերազարդ շաբաթաթերթը, սակայն առավելապես գրական և մշակութային բովանդակությամբ: Այն 1919-1920 թթ. հրատարակված «Առավոտ նորահարսներու» շաբաթաթերթի շարունակությունն էր²⁸: Արտոնատեր-խմբագիրն էր Ֆ. Ու. Մեքալըմը, տնօրեն-խմբագիրը՝ Գր. Հ. Գալուստյանը:

Պարբերականն ուներ ուսումնադաստիարակչական ուղղվածություն և բազմաժանր բնույթ: Տպագրում էր հեքիաթներ, ավանդություններ, գրույցներ, բարոյախոսական նյութեր: Ֆիզիկական պատրաստականությունը ներքին համոզմունք դարձնելու հարցում շաբաթաթերթն առաջարկում էր լուրջ ուշադրություն կենտրոնացնել բնագիտական առարկաներին՝ դրան կապակցելով բարոյական արժեքների ընկալման խնդիրը: «Զբոսանքի բաժին» խորագրով նյութերում «Հայ պատանին» տպագրում էր հանելուկներ, բառախաղեր, թվաբանական ու տրամաբանական խրնդիրներ և այլն: Անգլիական պետական ու ռազմական նշանավոր գործիչների կենսագրականներին խմբագիրները զուգակցում էին ազգային բնույթի հրապարակումներ, հայրենիքի հանդեպ հետաքրքրություն և սեր արծարծող այլևայլ նյութեր: Ուշագրավ են ճաշակով ընտրված «Հայ ժողովրդական հեքիաթներ» խորագրի նյութերը՝ Շահենի և Սոս Վանիի մշակումներով: Հատկապես աչքի են ընկնում Գր. Հ. Գալուստյանի պարզ և պատկերավոր բանաստեղծությունները, խրատական քառյակներն ու առակները՝ մանկան մեջ բարոյական ճիշտ կողմնորոշումներ սկզբնավորելու և խորացնելու հնարանքներով: Այս հեղինակը թարգմանել է Անդերսենի հեքիաթները՝ դարձյալ նույն արդիական բարոյախոսական նպատակներով: Պարբերականը իբրև թերթոն տպագրեց «Շեքսպիրյան պատմվածքներ» շարքը՝ անգլիացի դրամատուրգի պիեսների պոեմների մատչելի շարադրանքը պատանիների համար, որ թարգմանել է Գր. Հ. Գալուստյանը, և որի աշխատակցությունը բավական զգալի է այս շաբաթաթերթում:

«Հայ պատանու» խրատական-բարոյախոսական բազմաթիվ նյութերում ամրապնդվում է բնության և մշակույթի արժեքների հանդեպ սիրո, բարոյական ազնիվ զգացումների գաղափարը: Խրատները երբեմն վերաբերում են պատանու անհատական և գործնական վարքագծին: Պարբերականին աշխատակցում էին Հ. Հինդլյանը, Կիլիկեցին, Գ. Մալաթյանը և ուրիշներ:

Հետպատերազմյան շրջանի պարբերականներից քաղաքական ու հասարակական ընդգծված ուղղություն ուներ ազգային ու գրական «Հայ միտք» շաբաթաթերթը: Այն հրատարակվում էր Կ. Պոլսում, 1919 թ., Հովհ. Ասպետի խմբագրությամբ: Աշխատակցում էին Ե. Օռյանը, Ա. Ալ-

²⁸ Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (կազմ. Ա. Կիրակոսյան), Ե., 1970, էջ 205:

պոյաճյանը, Վ. Թեքեյանը, Վ. Հարությունյանը և այլք: Շաբաթաթերթն արտացոլել է Կ. Պոլսի հայության ազգային ու հասարակական կեցությունը, մշակութային ծիլեր արձակող երևույթները, ոչ վաղ անցյալի՝ ցեղասպանության իրադարձությունները: Ուներ ազատամիտ, ռամկավար ուղղություն, ինչն արդեն պարզ է դառնում նրա աշխատակիցների գործակցությունից: Խմբագրությունը հավատում էր Հայաստանի արևմտյան մասում ազգային պետականության վերականգնման մոտավորապես հեռանկարներին՝ ակնկալելով նախ Անգլիայի, այնուհետև ԱՄՆ-ի էական օգնությունն այս խնդրում: Հետևում էր Նուպարի գործունեությանը՝ Փարիզում գումարվող հաշտության կոնֆերանսի կապակցությամբ: «Լուսանցքին վրայ» խորագրով տպագրել է Ե. Օտյանի երգիծական անդրադարձները Կ. Պոլսի հայ հանրության թուրքերի հետ հարաբերությունների, թատերական կյանքի, հայ արվեստագետների, գրողների ու գրականության վիճակի վերաբերյալ: Ուշագրավ են Ա. Ալպոյաճյանի ակնարկը արևմտահայ մամուլի ու նրա գործիչների, Կ. Պոլսի պատրիարքարանի գործունեության վերսկսման մասին Հ. Ասպետի և այլոց հրապարակումները: «Հայ միտքը» տպագրել է Զ. Եսայանի, Ա. Չոպանյանի, Հ. Մնձուրու, Հ. Պողոսյանի և մյուսների չափածո և արձակ ստեղծագործությունները, թարգմանություններ ֆրանսիական գրականությունից: Պարբերականը մասնավոր ուշադրություն է դարձրել հայ գրականության առջև դրված խնդիրներին, ընդգծել դրա գործնական նշանակությունն ու կարևորությունը ազգային վերածնության ասպարեզում:

Կանանց համար նախատեսված հրատարակություն էր «Հայ կին» կիսամյա հանդեսը, որ լույս էր տեսնում Կ. Պոլսում, 1919-1933 թթ.՝ Հայկանուշ Մառքի խմբագրությամբ: Հանդեսի ծրագիրն ընդգրկում էր հայ կնոջ բարոյական ու հասարակական կացության, ընտանիքում և հասարակության մեջ նրա տեղի, նշանակության լուսաբանումը, տոհմիկ բարքերի և ավանդույթների ու արդիականության զուգադրումը, կրթական, մշակութային կյանքում կնոջ գործունեությունն ու դրանց առնչվող խնդիրները: Տպագրել է կանանց կենցաղային, առողջապահիկ հարցերին, արհեստագործության ասպարեզում հայ կնոջ ներդրումներին, առհասարակ կանանց վերաբերող ամենատարբեր նյութեր: «Կանանց աշխարհին», «Նորածնության բաժին», «Տոհմիկ էջեր» և այլ խորագրերով հրապարակումներում շոշափել է հայ կնոջ հետաքրքրություններին ընդառաջող մտածված և հարուստ լրատվություն պարունակող հիմնահարցեր, որոշակի հակումներ ցուցաբերել ֆեմինիստական խնդիրների նկատմամբ: Աշխատակցել են Մ. Պերպերյանը, Անայիսը, Արշ. Թեոդիկը, Հո. Արապյանը, Զ. Գալեմբյարյանը, Վ. Թորգոմյանը, Կ. Բասմաջյանը և ուրիշներ: Հանդեսում ուշագրավ տեղեկություններ կան Կ. Պոլսի «Հայ կանանց ընկերակցության», մարմնամարզում կանանց ներգրավելուն ուղղված նրա ջանքերի և այլնի մասին: Հոդվածներ է նվիրել կնոջ ամուսնության, նրա տնտեսական պայմանների, դրանց հանդեպ հասարակության վերաբերմունքի խնդիրներին, ցուցադրել ընտանիքում և հասարակության մեջ հայ կնոջ անազատ վիճակն ու կրավորական դերը, առաջադրել այդպիսիք մեղմելու պահանջներ²⁹: Հոդվածների մի խումբ է նվիրված սփյուռքահայ

²⁹ Հայ կին, 1920, N 2, էջ 411-412, 1921, N 3, էջ 817-818:

արվեստագետ կանանց և նրանց գործունեությանը՝ ամերիկահայ երգչուհի Զապել Փանոսյանին, դաշնակահարուհիներ Արփինե Ինայեթյանին, Էմենի Մելիքյանին (Ֆրանսիա) և այլոց, լուսաբանել ժամանակակից մշակույթի և գիտության մեջ կանանց արժեքավոր նվաճումները: Վ. Թորգոմյանը պատմական անդրադարձներ է արել հայ կնոջ հայրենասիրական ու ազգօգուտ գործունեությանը: Ձգտելով բազմակողմանիորեն նպաստել կնոջ մտավոր ու հատկապես մշակութային զարգացման մղումներին՝ մշտապես լրատվական ու վերլուծական նյութեր է տպագրել Կ. Պոլսի հայ թատերական ու գրական կյանքի մասին, լուսաբանել տեղի «Հայ թատերական միութեան» գործունեությունը:

«Հայ կինը» տպագրել է Հայկանուշ Մառքի, Դ. Վարուժանի, Վ. Թեքեյանի, Ե. Գուլանճյանի, Ե. Դուրյանի, Անայիսի և այլոց չափածո և արձակ գործերը, թարգմանական էջեր եվրոպական գրականությունից:

Ձմյուռնիայում ևս նշված ժամանակահատվածում նկատելի էր հասարակական կյանքի ու մամուլի աշխուժացումը՝ կապված Առաջին աշխարհամարտում Օսմանյան Թուրքիայի պարտության և իշխանությունից իրթիհատականների հեռանալու հետ: 1919 թ. այստեղ «Արևելյան մամուլ» թերթի հետ հրատարակվում էր «Ատրուշան» գիտական և գեղարվեստական կիսամյա հանդեսը, որի տնօրեն-խմբագիրն էր Մ. Բարթիկյանը: Հանդեսը տպագրվել է ընդամենը յոթ թիվ, սակայն իր կարճակեցության մեջ իսկ ուշագրավ երևույթ դարձավ գմյուռնահայ մշակութային կյանքում: Անդրադարձել է հետեղեռնի շրջանի հայ գրականության խնդիրներին, հատկապես նշել օսմանյան միջավայրի կաշկանդող, այնուհետև կործանարար նշանակությունը հայ գրականության համար: «Ատրուշանի» աշխատակիցներից Մ. Պարսամյանն առաջադրում էր հայ գրականության նոր խնդիրները արմատապես փոփոխված ազգային ու քաղաքական իրադրության մեջ, փորձում տալ նոր գրական սերնդի բնութագիրը քառամյա պարտադրված լռությունից հետո: Նորերի գրական վարանդումներին նա հանդիպադրել է եղեռնին զոհ գնացած գրական մեծությունների ստեղծած արժեքները, հատկապես մեծարել Գր. Ջոհրապին: Մ. Դավիթյանը, որը ուրվագծել է մեծ արվեստագետի, փաստաբանի և հասարակական գործչի կերպարը, լուսաբանել է նրա գործունեության քիչ ծանոթ, բայց և բնութագրական կողմերը³⁰: Հետաքրքիր են հեղինակի դիտողությունները Ջոհրապի՝ օսմանյան խորհրդարանում ունեցած գործունեության, բարբարոսական վարչակարգի պայմաններում մտածողի ու հայրենասերի ապրած խորը դրամայի և ողբերգական վախճանի մասին: Յույց է տրվում Ջոհրապի ձեռնարկած՝ ազգային շահերի պաշտպանությունը օսմանյան խորհրդարանում, նրա համարձակ քննադատությունը՝ ուղղված ջարդարար Բիրինջի զադե Արիֆի բեյի մեքուսական ընտրության վավերացման դեմ:

«Ատրուշանին» իր կյանքի վերջին ամիսներին աշխատակցել է գմյուռնահայ հանրահայտ երգիծաբան Հ. Արփիարը: Նրա մահից հետո հանդեսը տպագրեց Մ. Բարթիկյանի հողվածը՝ նվիրված երգիծաբանի կենսագրությանն ու գրական գործունեությանը:

³⁰ Ատրուշան, 1919, N 2, էջ 18-27:

«Ատրուշանը» և նրա շուրջ խմբված մտավորականները հավատում էին ազգի վերածնությանը՝ ցեղասպանության արհավիրքներին հակառակ, ինչպես նաև Զմյուռնիայի հայ համայնքի ապագային: Հանդեսն առաջարկում էր առհասարակ հայության մեջ նշել Մ. Նուպարյանի հոբելյանը, վեր բարձրացնել ազգային արժեքներն այդ դժվարին ժամանակներում: Այս լավատեսական տրամադրությունների հետ միասին, սակայն, «Ատրուշանի» պոեզիան համակված է ցեղասպանության ողբերգությունից ծնված մռայլ և թախծոտ զգացումներով ու պատկերներով: Հանդեսը տպագրել է Կ. Ջարյանի, Ե. Գոլանձյանի, Մ. Պարսամյանի, Վահրամ Թաթուլի և այլոց բանաստեղծությունները, Մ. Բարթիկյանի, Ա. Կուզելի, Ս. Ճիզմեճյանի և ուրիշների բանասիրական ու գրաքննադատական հոդվածները հայ և արտասահմանյան գրականության ու գրական դեմքերի մասին: Զմյուռնիան հույների կողմից ազատագրվելու առթիվ տպագրել է Ատրուշանի (Ա. Անտոնյան) «Պատմական օրը» ծանուցումը³¹:

Կրոնական բովանդակություն ունեւ Զմյուռնիայի «Դափնի» կիսամյա հանդեսը, որը լույս է տեսել 1921-1922 թթ.: Արտոնատեր-պատասխանատու տնօրենն էր Հ. Ջվանշիրը: Կրոնաթերթը հրատարակվում էր Զմյուռնիայի առաջնորդ Ղ. Դուրյանի թևակցությամբ: Տպագրում էր կրթնաբարոյական, խրատական քրիստոնեական հոգևոր արժեքներին վերաբերող նյութեր, քարոզներ, կրոնադավանական ուղղվածության հրապարակումներ և այլն: Հենվում էր համապատասխան գրականության սյուժեներին ու պատվիրաններին: «Դափնին» իր մի շարք հրապարակումներում բացատրում էր հայ եկեղեցու արարողությունների ու ծեսերի իմաստը, մեկնաբանում պատարագի, հոգեհանգստի աղոթքի խորհուրդներն ու նշանակությունը հայ եկեղեցու ընկալումներում: Հրապարակումների մի այլ խումբ ստուգաբանում էր կրոնական հասկացությունների նշանակությունն ու արժեքը: «Դափնին» անդրադարձել է քրիստոնեական վարդապետության հարցերին, հակադրվել դավանաբանական տարաձայնություններին, սխոլաստիկ վեճերին՝ ելնելով ընդհանրական քրիստոնեական եկեղեցու մեկնակետից: Հավատի ընկալման հարցերում ցուցաբերել է լայնախոհություն՝ հետևելով Արմաշի դպրեվանքի (որի սաներից էր Ղ. Դուրյանը) ավանդույթներին: «Դափնին» կարծում էր, որ տիեզերական ժողովի որոշումները պարտադիր չեն հավատացյալների համար, և որ քրիստոնյան պետք է ազատ լինի իր կրոնաբարոյական ըմբռնումներում՝ առաջնորդվելով քրիստոնեական պատվիրաններով և առաքինությամբ³²: Պարբերականը բավական կտրուկ առաջադրում էր հայ եկեղեցու բարեփոխման հիմնահարցը՝ ցուցաբերելով իր ազատամիտ հակումները: Ղ. Դուրյանը պաշտպանում էր «Ազատ եկեղեցի ազատ պետության մեջ» սկզբունքը՝ հիմնավորելով քաղաքացիական իշխանությունից եկեղեցու անկախությունը, որ դեռևս 1860-ական թթ. Զմյուռնիայի «Ծաղիկի» էջերում առաջ էր քաշել նրա խմբագիր Գր. Զիլինկիրյանը: Եկեղեցու և կրոնի ազդեցության նվազումը հանրության մեջ Ղ. Դուր-

³¹ Նույն տեղում, 1919, N 6, էջ 88:

³² Դափնի, 1921, N 6, էջ 169-170:

յանը համարում էր եկեղեցու և աշխարհիկ իշխանության անթույլատրելի սերտաճման հետևանք, քանի որ եկեղեցին հենվում էր հավատի, իսկ քաղաքացիական իշխանությունը՝ օրենքի վրա, որոնք կարող են ընդամենը լրացնել իրար, բայց երբեք չնույնանալ: Այս սկիզբների ներդաշնակության մեջ էր տեսնում «Դափնին» կրոնի և գիտության ոչ թե հակադրության, այլ գործակցության գաղափարը: Կրոնաթերթի բնաբանն էր «Հառաջադիմությունը կրոնքով և գիտությունով», որ հատկապես ջանում էին ապացուցել պարբերականի աշխատակիցներ Վրույրը և Վ. Ներսեսյանը՝ պնդելով կրոնի և գիտության փոխհամաձայնեցված ընթացքի կարևորությունը³³:

«Դափնին» անդրադարձել է ցեղասպանության իրողություններին ու կրոնական մտայնությանը համապատասխան հիմնավորումներով դատապարտել է դրա հեղինակներին: Նրա էջերում զմյուռնահայ համայնքի ներքին կյանքը և առհասարակ ազգային գործերը արտացոլվել են հպանցիկ և ոչ հետևողական: Ճանաչողական նշանակություն ունեն կրոնաթերթի տպագրած հիշատակարանները և պատմական բնույթի այլ նյութեր, որոնք վերաբերում են զմյուռնահայ գաղթօջախի անցյալին, առաջնորդների գավազանագրքին, որ ընդգրկում է XVII-XVIII դդ.: Տպագրել է Տ. Եպ. Պալյանի, Ե. արք. Դուրյանի, Դ. Դուրյանի, Ն. Ներսեսյանի, Հ. Սրմբրյանի, Գր. Գալեմբյարյանի և այլոց հոդվածներն ու հրապարակումները:

Ցեղասպանությանը հետևող այս ժամանակաշրջանում ազգային արվեստի ու մտավոր արժեքների շուրջ պոլսահայությանը համախմբելու նպատակ ունեն «Բարձրավանք» ամսագիրը, որ խմբագրում և հրատարակում էին Գ. Գավաֆյանը, Կ. Զարյանը, Վ. Թեքեյանը, Շ. Պերպերյանը և Հ. Օշականը: Ամսագիրը լույս էր տեսնում Կ. Պոլսում, 1922 թ.: Այս պարբերականը լուսաբանել է Կ. Պոլսի հայության մշակութային կյանքի իրողությունները, հոդվածներ նվիրել նորակազմ դերասանական խմբին, ժամանակի ճանաչված նկարիչներ Վ. Մախոխյանի, Փ. Թերլեմեզյանի, Ս. Խաչատուրյանի, Ս. Քյուրքճյանի, Ե. Թադևոսյանի և այլոց արվեստին: «Բարձրավանքը» ավանգարդիստական քամահրանքով է գնահատել դարասկզբի հայ իրապաշտական գրականությունը՝ սկսած Տ. Արփիարյանի «Մասիսից» և վերջացրած թատրոնով ու Շիրվանզադեի դրամատուրգիայով: Հ. Օշականը՝ ոչ քիչ դեպքերում ծայրահեղ իր գնահատումներով, անկատար էր համարում Շիրվանզադեի դրամատուրգիական արվեստը, ինչպես և բանաստեղծական ոգին և լեզուն³⁴: Նույն կեցվածքով Գ. Ֆեներճյանը ժխտում էր ոչ վաղ անցյալի և ժամանակակից իրապաշտներին և նրանց ստեղծագործությունը³⁵: «Բարձրավանքը» շատ ավելի լայնախոհ էր ազգային երաժշտության գնահատումներում և ուշագրավ դիտարկումներ էր անում հայ և եվրոպական երաժշտական արվեստի վերաբերյալ: «Բարձրավանքը» անուղղակիորեն հղում էր նաև իր ներշնչման աղբյուրները՝ ծանոթություններ տալով արվեստների դասակարգման տեսությունների վերաբերյալ, որոնց այս կամ այն չափով հետևում

³³ Նույն տնդում, N 3, էջ 81, 1922, N 2, էջ 36::

³⁴ Բարձրավանք, 1922, N Դ, էջ 95-101:

³⁵ Նույն տնդում, N Գ, էջ 82-87:

էին նրա հեղինակները: Ամսագիրն ընդհանուր առմամբ արտահայտել է 1910-ական թթ. արևմտահայ մտավորականության գրական ու գեղարվեստական ըմբռնումները, տպագրել Մ. Մեծարենցի, Վ. Թեքեյանի, Հ. Օշականի, Հ. Մնձուրու, Կ. Զարյանի և այլ գրողների երկերից:

Առավելապես հասարակական-քաղաքական բովանդակություն ուներ 1920-1922 թթ. Կ. Պոլսում լույս տեսնող «Երկիր» երեկոյան օրաթերթը: Պատասխանատու տնօրենն էր Է. Չոբուրյանը: Այն ուներ հնչակյան ուղղություն: 1915 թ. կախաղան հանված քսան հնչակյան գործիչներին (Փարամազ, Ա. Աչքբաշյան, Թ. Կարապետյան, Գ. Վանիկյան և այլք) բնութագրել է որպես «ազատ ու ինքնավար Հայաստանի նախակարապետներ», տպագրել նրանց նվիրված դիմանկարային ակնարկներն ու լուսանկարները³⁶: «Երկիրը» համակրական վերաբերմունք ուներ Խորհրդային Հայաստանի նկատմամբ, որ սակավ բացառություններից մեկն էր ժամանակի պոլսահայ մամուլում: Խորհրդային Հայաստանի կացության ու զարգացման հեռանկարների շուրջ բանավիճել է ՀՅԴ, մասնավորապես Մ. Վրացյանի հետ: Կարսի խորհրդաժողովը (1921 թ. սեպտեմբերի 26-հոկտեմբերի 13) որակել է իբրև «խաղաղության ակտ» հայերի և թուրքերի միջև: Թերթը դրվատում էր հայկական պատվիրակության «խաղաղասիրական ու չափավոր գործելակերպը 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրից անմիջապես առաջ՝ անգիտանալով հայկական կողմի վրա գործադրված ճնշումները խորհրդային ղեկավարության կողմից: «Երկիրը» նկատում էր, սակայն, որ Կարսի խորհրդաժողովը ոչ մի օգուտ չտվեց հայերին և ելնելով կուսակցական ուղղվածությունից՝ դրա պատճառներից մեկն էր համարում 1921 թ. փետրվարյան խռովությունը, որ կազմակերպել էին դաշնակցականները, և որը, իբր, առիթ էր տվել թուրքերին՝ պահանջելու, որ հայկական պատվիրակությունը չմասնակցի Մոսկվայի խորհրդաժողովին³⁷: Կոչ էր անում Կ. Պոլսի հայ համայնքին և գաղթօջախների ազգակիցներին՝ սատարել Խորհրդային Հայաստանի տնտեսական ու մշակութային զարգացմանը: Լուսաբանում էր ՀՕԿ-ի գործունեությունը, Հ. Թումանյանի և Ե. Թադևոսյանի այցը Կ. Պոլիս, ընդգծում դրա նշանակությունը Կ. Պոլսի և Խորհրդային Հայաստանի կապերի խորացման գործում: Միաժամանակ, «Երկիրը» հույսեր էր կապում Սևրի դաշնագրի միջազգային նշանակության հետ՝ ակնկալելով, որ այն հիմք պետք է դառնա Արևելյան հարցի լուծման համար՝ «արդի պահանջումներին համապատասխան փոփոխություններով»³⁸: Խորհրդա-թուրքական հարաբերությունների կտրվածքով «Երկիրը» ակնկալում էր, որ դրանց զարգացումը կհասցնի Արևելյան հարցի, ուրեմն և Հայկական հարցի վերակենդանացմանը և, ի վերջո, թուրքական ներքին ու արտաքին քաղաքականության վերանայմանը: Քողարկված, բայց և նկատելիորեն տուրք տալով համաշխարհային հեղափոխության բոլշևիկյան տեսլականին՝ «Երկիրը» հնարավոր էր համարում, որ Թուրքիան կենթարկվի հեղաշրջումների՝ «իր երկրի բացարձակ մեծամասնությունը կազմող գյուղացիական զանգուածներու դասակարգային շահերուն համապատասխան

³⁶ Երկիր, 1921, 18 հունիսի:

³⁷ Նույն տեղում, 16 նոյեմբերի:

³⁸ Նույն տեղում, 27 սեպտեմբերի:

կարգուսարքով» կիրառարվի իր ազգայնական քաղաքականությունից և հարևան ժողովուրդներին կամովին կվերադարձնի նրանց ազգային պատմական իրավունքները³⁹:

Հետաքրքիր են ժամանակի պոլսահայ կյանքին վերաբերող «Երկրի» հրապարակումները, այն ժամանակաշրջանի, երբ քեմալականությունն ապրում էր իր կայացման փուլը՝ քաղաքագիտական նորահնար միջոցներով ձգտելով իր օգտին ծառայեցնել Արևմուտքի և Ռուսաստանի քաղաքական հակամարտությունները: Պոլսահայ ողջ հանրությունն այս շրջանում ապրում էր սպասողական վիճակում՝ կապված վերոհիշյալ հակասությունների այս կամ այն լուծման հեռանկարների հետ, որ և չէր կարող չհամակել «Երկրի» խմբագիրներին: Թերթն այս ոգով էլ արձանագրում է ազգային կյանքի տարընթացությունները Կ. Պոլսում, հորդորում է բարելավել ազգային հաստատությունների գործունեությունն ու վիճակը, կանոնավորել ազգային վարչության աշխատանքները: Քննադատական դիրք ունեւ Կ. Պոլսի երեսփոխանական ժողովի անդամ հարուստ առևտրականների հանդեպ, որոնք այդ ժողովում ապահովել են «անգոյն և համակերպող մեծամասնություն» միշտ պատրաստ մատները բարձրացնելու ի նպաստ վարչութեան»⁴⁰:

«Երկիրը» հետևում էր Կիլիկիայի հայության առօրյային, «Կիլիկիա» խորագրով նյութերում շոշափում Ադանայի հայության, այնտեղ գաղթած հայերի կացության հետ կապվող խնդիրները: Ոչ մի դրական հետևանք չէր սպասում ֆրանսիական բանակի՝ Կիլիկիան պարպելուց և այն թուրքերի վերահսկողությանը հանձնելու իրողությունից: «Թուրք մամուլ» խորագրի տակ քաղվածաբար տպագրել է Կ. Պոլսի թուրքական թերթերի նյութերը հայ-թուրքական հարաբերությունների, դրանցում հայերի վարքագծի և թուրքիայի հանդեպ նրանց վերաբերմունքի մեկնաբանություններով: «Երկիրը» քննադատեց «Իկդամ» («Առաջադիմություն») թերթի արտոնատեր Ահմեդ Ջեվդեթին՝ հայերի դեմ սպառնալի ու ամբարտավան լեզու բանեցնելու առթիվ՝ հատկապես շեշտելով, որ նա չի մոռացել իր երբեմնի շովինիստական ձգտումները⁴¹: Թուրքական մամուլի և քաղաքականության անհանդուրժելի դարձող դիրքը ցուցադրելու համար «Երկիրը» «Իկդամ»-ից արտատպել է մի հոդված, որտեղ հայտնվում է, թե թուրքերը «պետք է տրամադրուեն մոռանալ այն դաւաճանութիւնները, որ կատարեցին այս երկրի կրօնական և ազգային փոքրամասնութիւնները ընդհանուր պատերազմին և թէ Անատոլիւի վերջին կռիւներու ժամանակ»⁴²:

«Երկիրն» առաջ էր քաշում դրան տրամագծորեն տարբեր մոտեցում՝ թուրքերն իրենք պետք է գիտակցեն, որ փոքրամասնությունների հետ իրենց հարաբերությունները բարելավելու անհրաժեշտ հիմքն այն կլինի, որ թուրք ազգայնականությունը պետք է խոստովանի իր ավերիչ մո-

³⁹ Նույն տեղում, 17 նոյեմբերի:

⁴⁰ Նույն տեղում, 10 նոյեմբերի:

⁴¹ Նույն տեղում, 8 նոյեմբերի:

⁴² Նույն տեղում, 25 նոյեմբերի:

լեռանդությունը և ապահովի փոքրամասնությունների «գեթ նուազագոյն իրավունքները»⁴³:

Թուրք-հունական պատերազմին անդրադառնալիս թերթը զգուշորեն քողարկում է իր համակրանքը հույների հաջողությունների նկատմամբ: Այս վերաբերմունքը, սակայն, տեղի տվեց նրա սոցիալ-դեմոկրատական մտայնությանն այն իմաստով, որ 1921 թ. աշնանը նա արդեն դատապարտում էր կոմոլ կողմերին՝ «աւատապետական Թուրքիային», «պուր-ժուազական Հունաստանին», որոնցից առաջինը եթե «մահամերձի ջղաձգութեամբ որոշած է մինչեւ վերջ պատնէշին վրայ մնալ», ապա վերջինը կոմուն է նոր շուկաների և իր տնտեսության զարգացման համար: Թուրքական ազգայնականության ջղաձգումները «Երկիրը» տեսնում էր նաև Էնվեր փաշայի վերջին շրջանի գործունեության մեջ: Առաջին աշխարհամարտում Թուրքիայի կրած պարտությունից և իթթիհատական կառավարության կրախից հետո Էնվերը ռճրագործի կարոտախտը միացրել էր քաղաքական բախտախնդրի դյուրաթեք կեցվածքին՝ ստեղծելով «Միություն և առաջադիմություն ժողովրդական խորհուրդների կուսակցությունը» և դիմել Անկարայի քեմալական կառավարությանը՝ ճանաչվելու Թուրքիայի Ազգային ժողովի կողմից: Էնվերը մերժում էր ստացել, սակայն, ինչպես գրում է «Երկիրը», սովետներն ընդառաջել էին նախկին իթթիհատականին՝ համաձայնելով, որ Ռուսաստանում գտնվող թուրք գերիները մտնեն նրա կազմակերպության մեջ: Այդ՝ ակնհայտորեն ռազմականացված կազմակերպության ձևավորմանն էլ ձեռնամուխ էր եղել Էնվերը Կովկասում, որ և տազնապ էր պատճառել Անկարայի կառավարությանը: Վերջինս ծանուցագիր էր հղել Կարսի խորհրդաժողովին՝ մասնակցող Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի կառավարություններին՝ նախազգուշացնելով, որ իր հետ նրանց կնքած դաշնագրերը չեղյալ կհայտարարվեն, եթե մեկ ամսվա ընթացքում վերջ չտան Էնվերի գործունեությանը Կովկասում⁴⁴: Ինչ վերաբերում է իրենց՝ քեմալականների ազգայնական քաղաքականության բնութագրին, ապա «Երկիրը» լիովին կողմնակից էր եվրոպական կոմունիստների՝ Քեմալի հանդեպ խորհրդային ղեկավարների անհեռատես և օրախնդիր քաղաքականությունից տարբերվող տեսակետին: Թարգմանական մի հոդվածում («Քեմալականութեան բնութիւնը, իր արտաքին երեւոյթը եւ պատճառները»), որի հեղինակը ֆրանսիական կոմունիստ Մ. Մարքսն էր, նշվում է, որ Քեմալը ազգայնական է և բռնապետ: Նա ընդդիմանում է Սևրի դաշնագրին, ձգտում է Թուրքիան ազատել կապիտոլիացիաներից և այլ հակակշիռներից ու ստեղծել իսլամական կայսրություն: Քեմալը, շարունակում է հոդվածագիրը, ընդունել է սովետների գաղափարը, որովհետև չէր կարող առանց նրանց գենք ու զինամթերքի գոյատևել, թեև միաժամանակ, մերժել էր Կարմիր բանակի ուղղակի օգնությունը: Կոմունիզմը, ասվում է հոդվածում, Քեմալի համար ոչ նպատակ է, և ոչ էլ տեսական, այլ մի պարզ միջոց, որի նպատակն է ազգն իր շուրջ համախմբելը: Սովետների գաղափարախոսությունը Քեմալը կարող է սահմանափակել կամ փոփոխել իր քաղաքականության մեջ, բայց անփոփոխ է մնալու նրա ազգայն-

⁴³ Նույն տեղում, 8 նոյեմբերի:

⁴⁴ Նույն տեղում, 14 նոյեմբերի:

նականությունը⁴⁵։ Հոդվածն ուշագրավ է Քեմալի և Խորհրդային Ռուսաստանի քաղաքական հարաբերությունները մի հայտնի չափով բնութագրելու տեսակետից և ոչ պակաս ուշագրավ՝ «Երկրի» սոցիալդեմոկրատական հայացքները այդ փոխհարաբերություններն ընկալելու իմաստով։

«Երկիրը» տպագրել է գեղարվեստական արձակ և չափածո, ընթերցողին ներկայացրել Գր. Զոհրապի, Բ. Քեչյանի, Կ. Ություճյանի, Ս. Պարթևյանի և այլոց դիմանկարները՝ Լ. Էսաճանյանի հեղինակությամբ։ Թերթը հետևում էր ռուս գրականությանը, ուշադրություն դարձնում հատկապես Ա. Բլոկի ստեղծագործությանը և հեղափոխական շնչով համակված նրա «Տասներկուսը» պոեմին։ Անդրադարձել է ժամանակի ռուսական գրական երևույթներին ու տեղաշարժերին, բարձր է գնահատել Վ. Բրյուսովին, Ֆ. Սոլոգուբին, Պ. Զայցևին, Վ. Մայակովսկուն և ուրիշներին։ Դրականորեն է գնահատել ռուս ֆուտուրիստներին և «Պրոլետկուլտի» գրական ուղղվածությունը՝ հատկապես նշելով դրանց պայքարն անհատապաշտության դեմ։ Թարգմանական երկերից հետաքրքիր է Մ. Կրաֆորդի «Փրակայի կախարդուհին կամ հայ բժշկի մը սխրագործությունը» վիպակը, որ տպագրվեց «Երկրի» թերթոնի բաժնում՝ Մ. Խաչիկյանի թարգմանությամբ։

ЗАПАДНОАРМЯНСКАЯ ПЕЧАТЬ (1918-1922 гг.)

ХАРАТЯН А. А.

Резюме

В уцелевшей от геноцида константинопольской армянской колонии западноармянская периодическая печать начиная с 1918 г. заметно оживилась. В 1919 г. в Константинополе, равно как и в измирской армянской колонии, насчитывалось более двадцати периодических изданий. Константинопольская армянская периодика 1918-1922 гг. отражала жизнь местной армянской колонии, ее возрождающуюся культуру, новые литературно-художественные веяния и направления.

На страницах этих периодических изданий значительное место отводилось ожидаемой для Армении независимости, которую она должна была обрести при содействии Антанты, экономическому и политическому положению Республики Армения, вопросам репатриации и т. д. С победой кемалистов в Турции завершился этот этап развития армянской периодической печати, с присущим ей политическим содержанием и надеждами на самоопределение.

⁴⁵ Նույն տոնում, 30 նոյեմբերի։